ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ ԿՈՄԲԻՆԱՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Կոմբինատի հիմնադրումը և առաջին քայլերը)

Հ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Լենինականի տեքստիլ կոմբինատը Սովետական Հայաստանի արդյունաբերության առաջնեկներից է։ Հիմնադրվելով սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին, տեքստիլ կոմբինատը, հանրապետության տնտեսական հարաճուն հեքին համընթաց, աճեց և վերածվեց արդյունաբերական խոշոր ձեռնարկության։

Տեքստիլ կոմբինատի ստեղծման և հետագա զարգացման համար նախապես հիմք ծառայեցին բամբակագործության առաջին հաջող քայլերը, և, մանավանդ, ակնկալվելիք հեռանկարները։ Տակավին 1921 թ. նոյեմբերի 25-ին ընդունվեց Հայկական ՍՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի դեկրետը բամբակագործության մասին, որը լայն հնարավորություններ էր բացում գյուղատնտեսական այդ մշակույթի զարգացման առաջ։ Դեկրետը բամբակագործության բնագավառում վերացնում էր պետական մենաշնորհը և 1922—1923 թթ. բամբակագործներին ազատում էր պարենհարկից՝ թույլատրելով ընդհանուր նորմայից դուրս ունենալ ազատ հողաբաժիններ, օգտվել պետական վարկից[1]։

Տեքստիլ արդյունաբերության հումքային բազայի՝ բամբակամշակման զարգացման խնդիրներին համապատասխան 1923 թ. մարտին կազմակերպվում է հայ-ռուսական պետական բամբակագործական ընկերությունը[2], որին 1924 թ. գարնանը փոխարինում է «Հայբամբակկոմը»[3]։ Վերջինիս ձեռնարկած միջոցառումների շնորհիվ ընդլայնվում են բամբակի ցանքատարածությունները, բարձրանում է բերքատվությունը։ «Հայբամբակկոմի» մշակած ցանքատարածությունները 1925—1926 թթ. արդեն կազմում էին 15.103 դեսյատին[4]։

Տեքստիլ արդյունաբերության հիմնադրման ճանապարհին լուրջ քայլ էր Երևանի առաջին բամբակազտիչ գործարանի հիմնումը 1923 թ.։ Իր վեց մեքենաներով գործարանը երկու հերթափոխում արդեն մշակում էր 1200 փութ բամբակ։ 1924 թ. Երևանում հիմնադրվում է երկրորդ բամբակազտիչ գործարանը՝ 4 մեքենաներով։ Սակայն այս ձեռնարկությունների հնարավորությունները սահմանափակ էին. նրանք չէին կարողանում զտել Հայաստանում արտադրվող բամբակի ամբողջ հումքը։ Պրոբլեմը լուծելու նպատակով հանրապետության և միութենական համապատասխան կազմակերպություններն ընդունեցին Հոկտեմբերյանում նոր գործարան կառուցելու որոշում, որը իրականացվեց 1925 թ. մայիսին։

---

1 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, Երևան, 1967, էջ 182։

2 «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», Երևան, 1926, էջ 32։

3 Նույն տեղում, էջ 33։

4 Նույն տեղում։

Բամբակագործության զարգացման նպատակով ձեռնարկված միջոցառումները լուրջ արդյունքներ տվեցին ոչ միայն ցանքատարածությունների (1923 թ. 4000 դեսյատինի դիմաց՝ 1924 թ. հասավ 15.000 դեսյատինի)[5], այլև բերքի, հետևապես և տեքստիլ արդյունաբերության հումքի ավելացման առումով։ Սակայն ստացված ամբողջ բերքը ուղարկվում էր ՌՍՖՍՀ-ի գործարանները, մի հանգամանք, որը չէր կարող չբարձրացնել արտադրանքի արժեքը, առավել ևս այն ժամանակվա տրանսպորտի պայմաններում։

Հարց էր ծագում, թե Հայաստանն, արդյո՞ք, հնարավորություն ուներ կազմակերպելու սեփական տեքստիլ արդյունաբերություն։ Մասնագետներն ու համապատասխան տնտեսական օրգաններն այդ հարցին տալիս էին միանգամայն դրական պատասխան, ելնելով հետևյալ հիմնավորումից. նախ, հանրապետությունը լիովին ի վիճակի էր այն ապահովելու բարձրորակ հումքով, իսկ Լենգէսի ապագա հիդրոէլեկտրակայանը՝ էժան էներգիայով։ Առավել հեշտ էր լուծվում բանվորական ուժի խնդիրը՝ ոչ միայն Շիրակի գավառի համեմատաբար խիտ բնակեցված լինելու, այլև Լենինականում բազմահազար հայ որբերի առկայության շնորհիվ։ Աշխատող ձեռքի իր մեծ պահաջով տեքստիլ ձեռնարկությունը, այսպիսով, աշխատանք և հաց կտար թուրքական յաթաղանից փրկված հայ մանուկներին, որով նրա ստեղծումը ստանում էր նաև բարոյաքաղաքական որոշակի իմաստ ու նշանակություն։

Կյանքի սոցիալիստական զարթոնքի հետ միասին հանրապետությունում տեքստիլ արդյունաբերություն ստեղծելու պահանջը սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարիներից դառնում է օրակարգի հարց։ Առաջին կոնկրետ քայլերը ձեռնարկվում են 1922 թ., երբ Հայաստանի կառավարությունը ցուցում ստացավ բամբակի նախատեսված հումքի հիման վրա տեղում կազմակերպել բամբակյա գործվածքների արտադրություն։ Սկզբնապես որոշվում է կառուցել 36 հազար իլիկ ունեցող մանարան և 850 հաստոց ունեցող գործվածքեղենի ֆաբրիկա[6]։ Սակայն հարցը ժողտնտխորհում քննարկելիս պարզվեց, որ այս նախագիծը գերազանցում է տրամադրված գումարը, և ինժեներ Հ. Հախումյանին հանձնարարվեց կազմել նոր նախագիծ՝ 18 հազար իլիկ և 450 հաստոց ունեցող ձեռնարկության համար, որը և որոշ փոփոխություններով ընդունվեց[7]։

Մնում էր որոշել գործարանի հիմնադրման վայրը, և առավելությունը տրվեց Ալեքսանդրապոլին, ելնելով արդեն վերը նշված նկատառումներից։ Տեքստիլ արդյունաբերության ստեղծման գործում հայ աշխատավորներին օգնության ձեռք են մեկնում Իվանովո-Վոզնեսենսկի տեքստիլագործները։ Նրանք, սովետական կառավարության հավանությամբ, Հայաստանում ստեղծվելիք գործարանին են նվիրում իրենց ձեռնարկություններից մեկը, որն ուներ 1600 իլիկ և 32 գործող հաստոց[8]։

Մինչև նոր կոմբինատի նախագծի և ապա շինարարական աշխատանքների ավարտելը, որոշվում է տեղադրել ստացված մանող և գործող հաստոցները։ Նպատակահարմար է համարվում սարքավորումների տեղադրումը կատարել

---

5 «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», Երևան, էջ 7։

6 «Տիրապետենք տեխնիկային» (ամսաթերթ), 1934 թ., № 5—6, էջ 1։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։

քաղաքի հյուսիսային մասի հինավուրց «Ձիթողցոնց զարորի» երկհարկանի շենքում, որն այժմ ընկած է գուլպայի գործարանի բակում։ Իվանովոյի կոմբինատի ղեկավարությունը որոշում է նաև Հայաստան գործուղել մի խումբ մասնագետներ, որպեսզի նրանք օգնեն սարքավորումների տեղադրմանը, նոր կադրերի պատրաստմանը։ Նրանց թվում էին էլեկտրիկ-մեխանիկ Ա. Սագովը, մանող վարպետ Ֆ. Վիրսովը, վերանորոգողներ Ի. Զոլոտովը, Ե. Կուզմիչևը։ Հայաստանի Ժողտնտխորհը 1924 թ. գործարանի կառուցման համար ստեղծում է հատուկ հանձնաժողով, որի նախագահն էր Ժողտնտխորհի անդամ Հ. Գասպարյանը, իսկ անդամներն էին՝ Ա. Հովսեփյանը, Հ. Տեր-Աստվածատրյանը և Հ. Բաղալյանը[9]։ Մայիսի 1-ին հանդիսավոր իրադրության մեջ դրվում են գործվածքային ֆաբրիկայի հիմքերը։

Շինարարական աշխատանքներին զուգահեռ հոգ է տարվում նաև կադրերի պատրաստման մասին։ Արդեն 1924 թ. սկզբից գուլպայի ֆաբրիկայի բազայի վրա ստեղծված արհեստանոցում սովորում էր 500 հոգի[10]։ Կադրերի պատրաստման հետ միասին արհեստանոցը թողարկում էր նաև պատրաստի արտադրանք՝ ամսական 500—600 փութ մանվածք և 60—70 հազար մետր անմշակ գործվածք[11]։ Ստեղծվող ձեռնարկության պատմության նշանավոր օրերից էր 1924 թ. ապրիլի 15-ը, երբ ուսումնական արհեստանոցը թողարկեց կտավի առաջին մետրերը։

Այսպես ծնվեց Հայաստանում տեքստիլ արդյունաբերության առաջնեկը։

Ինչպես շինությունը, այնպես էլ ստացվող մեքենաներն ու զանազան սարքավորումները փոխադրելու համար պահանջվում էր կայարանից դեպի շինհրապարակ անցկացնել երկաթգիծ, կառուցել բեռնաթափման հրապարակ։ 1925 թ. ապրիլի 1-ին Հայաստանի Ժողտնտխորհը այդ մասին հատուկ որոշում է ընդունում և դիմում է Անդրերկաթուղու վարչությանը՝ 5 կմ երկաթգիծ անցկացնելու առաջարկով[12], որը շուտով իրականացվում է։

Երկաթգծի կառուցումը շինարարական աշխատանքներին նոր թափ հաղորդեց. այն հնարավորություն տվեց ժամկետից շուտ, 1925 թ. վերջին, ավարտել գործարանային կորպուսի կառուցումը։ Շուտով մանարան-գործվածքային գործարանին տրամադրվեց գործվածքային հատվածամասը՝ եղած իլիկների թիվը հասցնելով 40 հազարի։ Սակայն դրանով ևս չէր կարելի բավարարվել։ Նոր մեքենաներ և սարքավորում ձեռք բերելու նպատակով գործարանի կառուցման հանձնաժողովի նախագահ Հ. Գասպարյանը գործուղվում է արտասահման։ Գերմանական «Հարթման» ֆիրմայից նա գնում է 25.000 իլիկ ունեցող մեքենաներ[13], որոնք շուտով սկսվում են առաքվել Հայաստան։ Դրանց մի մասը տեղադրելուց հետո 1926 թ. սարքավորումների քանակը 231 միավորից հասնում է 650 միավորի[14]։ Ավելանում է նաև բանվորների թիվը՝ արտադրության մեջ հասնելով 428 հոգու[15]։

---

9 Լենինականի քաղաքային պետական արխիվ, ֆ. 12, գ. 1, թ. 12։

10 «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», էջ 155—156։

11 Նույն տեղում։

13 Լենինականի քաղաքային պետական արխիվ, ֆ. 12, գ. 1, թ. 7։

13 «Տիրապետենք տեխնիկային», 1934, № 5—6, էջ 1։

14 Նույն տեղում, էջ 4։

15 Նույն տեղում, էջ 6։

Այս ամենն զգալի չափով նպաստում է արտադրանքի ավելացմանը։ Եթե 1924 թ. ուսումնական արհեստանոցը թողարկել էր ընդամենը 98 տոննա մանվածք, 92,9 հազ. մետր կտավ (58,2 հազ. ռուբլու ընդհանուր արտադրանք), այդպես 1925—26 թթ. արտադրվել է 156,6 տոննա թել, 430 հազար մետր գործվածք՝ 524,7 հազար ռուբլի ընդհանուր արժողությամբ։ 1926—27 արտադրական տարում ձեռնարկության արտադրանքն ավելի է աճում՝ հասնելով 202 տոննա թելի և 1,267 հազար մետր գործվածքի, այսինքն՝ 834,1 հազար ռուբլու[16]։

Արտադրության արագ աճը պահանջում էր ստեղծել տեխնիկական ինտելիգենցիա։ Այս հարցն առհասարակ ամբողջ հանրապետությունում բացառիկ կարևորություն էր ստացել և առնչվում էր երկրի սոցիալիստական զարգացման լենինյան պլանի իրագործման հետ։ Չբավարարվելով տեղում կադրեր պատրաստելով, որոշում ընդունվեց մի խումբ մասնագետ տեքստիլագործներ ուղարկել Միության առաջավոր ձեռնարկությունները՝ իրենց գիտելիքներն ամրապնդելու և խորացնելու համար։ 1928 թ. մարտին հայ մասնագետների առաջին խումբն ուղարկվեց Իվանովո և Մոսկվա։ Խմբի մեջ էին Ա. Ահարոնյանը, Գ. Կարգանյանը, Ա. Ալեքսանյանը, Ս. Ղազարյանը, Բ. Քոթանջյանը, Ա. Վարդանյանը և ուրիշներ։ Մի քանի ամիս հետո անհրաժեշտ գիտելիքներ ու փորձ ձեռք բերած խումբը վերադարձավ կոմբինատ և ձեռնամուխ եղավ նոր սարքավորումները տեղադրելու աշխատանքներին։ Երիտասարդ մասնագետներ Ս. Ղազարյանը, Գ. Կարգանյանը, Մ. Ղուրմազյանը և ուրիշներ ընդամենը վեց ամսում հաջողությամբ տեղադրեցին անգլիական «Բրուքս» և «Դոքսեյ» տիպի մեքենաները։ 1927 թ. շարունակվում էր նաև Գերմանիայից ստացվող «Հարթման» տիպի մեքենաների տեղակայումը։ Թեպետ այդ նպատակով Գերմանիայից ժամանել էր մասնագետների մի խումբ, բայց գործը հիմնականում ծանրացավ գործարանի երիտասարդ մասնագետների ուսերին[17]։ ՀամԼԿԵՄ Անդրկովկասյան երկրային կոմիտեի անդամ Ս. Ղազարյանի ղեկավարությամբ ստեղծված առաջին բրիգադը, որի մեջ մտան գործարանի արտադրական կոմբինատի կոմերիտական աշխատողներ Տ. Հակոբյանը, Գ. Սահակյանը, Ա. Ավագյանը, տասը օրում տեղադրեց 3 մեքենա։ Ընդհանրապես, ստացված մեքենաների 80 տոկոսը տեղադրեցին երիտասարդ մասնագետները և միայն 20 տոկոսը՝ գերմանացի մասնագետները[18]։

Ֆաբրիկաների ու արտադրամասերի կառուցմանը զուգահեռ աշխատանք էր տարվում նաև օժանդակ աշխատամասերի ու արհեստանոցների շինարարության ուղղությամբ։ Լայն թափ էին ստացել ջրամբարների, կոմունիկացիաների, ջրմուղի կառուցման և օժանդակ այլ աշխատանքներ։ Ձեռնարկության կառուցման հետ միասին կատարելագործվում էին նաև իրենք՝ մասնագետները։

1928 թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 8-րդ տարեդարձի օրը, Անդրկովկասյան ֆեդերացիայի և Հայաստա-

---

16 Նույն տեղում, էջ 5։

17 Հ. Ա. Ավետիսյան, Հայաստանի կոմերիտմիությունը սոցիալիստական ինդուստրացման համար մղված պայքարում, Երևան, 1959, էջ 40։

18 «Տիրապետենք տեխնիկային», 1934, № 5—6, էջ 1։

նի կառավարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, տեղի ունեցավ մանվածքային նոր ֆաբրիկայի հանդիսավոր բացումը։ Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհի անունից Ա. Մռավյանը ողջունեց քաղաքի աշխատավորությանը։ Այդ օրվանից գործարանը կոչվեց Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատ։

Ամփոփելով երկրի սոցիալիստական շինարարության առաջին հաջողությունները և մշակելով Սովետական Միության տնտեսական զարգացման հետագա միջոցառումները, Համկ(ր)կ 15-րդ համագումարը (1927 թ. դեկտեմբեր) ընդունեց սոցիալիստական ինդուստրացման կուրս։ Դրանով լայն հեռանկարներ բացվեցին նաև Հայաստանի տնտեսական առաջընթացի և վերափոխման համար, մասնավորապես լայն թափ հաղորդվեց Լենինականի տեքստիլ կոմբինատի շինարարությանը։ Ինդուստրացման տարիներին Լենինականի տեքստիլ արդյունաբերությունը խոշոր բեկում ապրեց։ Միայն 1927—28 տընտեսական տարում կապիտալ ներդրումները կազմեցին 2.930 հազար ռուբլի[19]։ Դա հնարավորություն տվեց տեղադրել 750 մեքենա-սարքավորում և թողարկել 352 տոննա մանվածք, 2,238 հազ. մետր գործվածք՝ ընդհանուր արտադրանքի գումարը հասցնելով շուրջ 1.367 հազար ռուբլու[20]։

Արտադրության ընդարձակմամբ բարձրանում էր հումքի պահանջարկը։ Նկատի ունենալով այդ, «Գլավտեքստիլի» որոշմամբ Ադրբեջանը Հայաստանին է տրամադրում 320 հազար փութ բամբակ (այդ ժամանակ գործարանը ստանում էր 120 հազար փութ տեղական հումք)[21]։

1927—1928 թթ. գործարանում արդեն աշխատում էր շուրջ 2000 բանվոր, հիմնականում որբանոցներից։ Պարզ է, որ տուն ու տեղից զրկված այս աշխատավորները, որոնք իրենց հիմնական զանգվածով նոր էին սկսել ընտանիք կազմել, բնակարանի խիստ կարիք ունեին։ Կոմբինատի աշխատողներին բնակարաններով ապահովելու խնդիրը սկզբից ևեթ դառնում է կուսակցական և պետական ղեկավար մարմինների լուրջ մտահոգության առարկան։ Լենինականի քաղսովետը 1927 թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ դիմում է ՀՍՍՀ Ժողտնտխորհին, միջնորդելով տեքստիլ կոմբինատի բնակարանային շինարարության համար բաց թողնել 150 հազար ռուբլու վարկ[22]։ Այս խնդրանքը հարգվում է, և ֆինանսների ժողովրդական կոմիսարիատը 1928 թ. տրամադրում է նշված գումարը[23]։

1930 թ. Լենինականի աշխատավորների հետևողական ջանքերով շահագործման է հանձնվում նաև նորակառույց գործվածքային ֆաբրիկան։ Այդ ժամանակ կոմբինատն արդեն հագեցված էր ավելի քան 40 հազար իլիկով և մի քանի հարյուր հաստոց ունեցող մեքենա-սարքավորումներով[24]։

Հանրապետության այդ խոշոր ձեռնարկությունը մշտապես որակյալ կադրերով ապահովելու նպատակով, Հայաստանի կառավարության ցուցումով, տեքստիլ կոմբինատին կից 1929 թ. բացվեց ֆաբրիկա-գործարանային ուսումնարան։

---

19 «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», Երևան, 1935, էջ 48։
20 Նույն տեղում։
21 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 5, գ. 1332, թ. 1։
22 Նույն տեղում, ց. 2, գ. 874, թ. 8։
23 Նույն տեղում, թ. 11։
24 «Տիրապետենք տեխնիկային», 1934, № 5—6, էջ 5—6։

Տեքստիլ կոմբինատի հիմնական բանվորական ուժն ի սկզբանե երիտասարդությունն էր։ Երիտասարդ բանվորների շրջանում սոցիալիստական մրցությունը ծավալելու գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոյի 1929 թ. մարտի 27-ի որոշումը համամիութենական սոցիալիստական մրցության մեջ Հայաստանի երիտասարդությանը ներգրավելու մասին[25]։

Կոմբինատի կոմերիտական կազմակերպությունը, ելնելով այս որոշումից, անցկացրեց միամսյակ, որին մասնակցեց բանվորների մեծամասնությունը։ Ստեղծվեցին մրցությունը նախապատրաստող և անցկացնող հանձնաժողովներ, իսկ ֆաբրիկաներին և արտադրամասերին կից՝ նախաձեռնող խմբեր, նշանակվեցին պատասխանատու կազմակերպիչներ[26]։

1929 թ. ապրիլին տեքստիլ կոմբինատում տեղի ունեցավ բանվորների ու ծառայողների կոնֆերանս, որը քննության առավ արտադրանքի ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, սոցիալիստական մրցության կազմակերպման հարցերը[27]։ Կոլեկտիվը պարտավորություն ստանձնեց ընթացիկ տարվա արտադրանքի ինքնարժեքը իջեցնել 7 տոկոսով, ամրապնդել աշխատանքային կարգապահությունը, բարձրացնել արտադրանքի որակը։ Կոնֆերանսում ընթերցվեց Երևանի արտադրական ձեռնարկությունների կոնֆերանսի մասնակիցների նամակը սոցմրցության ծավալման վերաբերյալ[28]։ Առանձին արտադրամասերում աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 10 տոկոսով[29]։ Սոցիալիստական մրցությունը տեքստիլ կոմբինատում նոր թափ ստացավ։ Առաջին հնգամյա պլանի կատարումը մեծ խանդավառությամբ համակեց բոլոր բանվորներին։ Համընդհանուր շարժման մեջ ընդգրկվեցին կոմբինատի բոլոր բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները՝ կուսակցական կազմակերպության ղեկավարությամբ։ Յուրաքանչյուր ֆաբրիկա ու արտադրամաս, հերթափոխություն ու գործամաս, բանվորներից ամեն մեկը սոցիալիստական պարտավորություններ էր ստանձնում։ Մրցողների առաջին շարքերում ընթանում էին կոմունիստներն ու կոմերիտականները։

Հայաստանի լենինյան կոմերիտմիության 6-րդ համագումարը (1929 թ., մայիս) բարձր գնահատեց Լենինականի տեքստիլ կոմբինատի կոմերիտական կազմակերպության հաջողությունները։ Այդ ժամանակ կոմբինատում աշխատողների 85 տոկոսը երիտասարդներ էին, 23 սկզբնական կոմերիտական կազմակերպություններում ընդգրկված էր ՀամԼԿԵՄ 1300 անդամ, որոնց 50 տոկոսը վարպետներ և ենթավարպետներ էին։ Կոմբինատի ԼԿԵՄ կազմակերպության որոշումով մանվածքային գործարանում դեռևս 1928 թ. ստեղծվեց կոմերիտական հատուկ արտադրամաս՝ կոմերիտական վարպետ, ՀամԼԿԵՄ Անդրերկրամի անդամ Սարդիս Ղազարյանի ղեկավարությամբ։ 50 հոգուց բաղկացած կոմերիտական արտադրամասին հատկացվեց 13 մանող մեքենա՝ 5340 իլիկով։ Կոմերիտականները խնամքով էին վերաբերվում հաստոցներին,

25 «Молодой рабочий», газета, Ереван, 2.IV.1929.
26 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, ց. 2, գ. 7, թ. 110—114։
27 «Բանվոր», 25.IV.1929։
28 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 15, գ. 9111, թ. 121։
29 «Ավանգարդ», 26.IV.1929։

ПА-12882

սարքավորումներին, խնայողաբար ծախսում հումքը, նյութերը և էլեկտրաէներգիան. գրա շնորհիվ կարճ ժամանակում զգալի չափով կրճատվեց խոտան արտադրանքը, 17,5 տոկոսով բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, զգալիորեն նվազեցին պարապուրդները՝ ամսական 3348 ժամից իջնելով 304-ի[30]։

1929 թ. մայիսի 1-ից կոմբինատի բոլոր աշխատամասերը և բանվորները լիովին ընդգրկվել էին սոցիալիստական մրցության մեջ, աշխատում էին այդ նշանաբանով։ Դրա շնորհիվ 1928—1929 թթ., նախորդ տարիների համեմատությամբ, կոմբինատում համախառն արտադրանքի թողարկումը աճեց 98 տոկոսով, իսկ մանվածքինը՝ նույնիսկ 124 տոկոսով։ Պլանով նախատեսված 6,8 տոկոսի փոխարեն արտադրանքի ինքնարժեքը իջավ 12 տոկոսով։ Մեկ տոննա բամբակի թելի ինքնարժեքը, օրինակ, պլանավորված 1051 ռ. 68 կ. փոխարեն կազմեց 926 ռ. 06 կ.[31]։ Աշխատանքի արտադրողականությունը հաջորդ տարիներին ևս շարունակում էր բարձրանալ մեծ չափերով. 1931 թ., օրինակ, 1930 թ. համեմատությամբ բարձրացավ 33 տոկոսով։ Արտադրական հաջողությունները զգալի տեղաշարժեր առաջ բերին նաև բանվորների աշխատավարձի մեջ։ Միջին աշխատավարձը 1929—30 տնտեսական տարում կազմեց 72 ռ. 05 կոպեկ, նախորդ տարվա համեմատությամբ ավելանալով 11,5 տոկոսով։ Իսկ 1931 թ. գործարանի աշխատավարձային ֆոնդը, 1930 թ. համեմատությամբ, աճեց 24,4 տոկոսով, բանվորի միջին աշխատավարձը 573 ռ. 30 կոպեկից հասավ 690 ռուբլու[32] (դրամական նոր կուրսով)։

Աշխատանքային վերելքի պայմաններում ծնունդ առավ Լենինականի, Քութահսիի, Թբիլիսիի և Կիրովաբադի տեքստիլագործների մրցությունը, որի նախաձեռնողները Լենինականի տեքստիլագործներն էին։ 1930 թ. նրանք մրցահրավեր-նամակ ուղարկեցին այդ քաղաքների տեքստիլագործներին։ Դեկտեմբերին ստացվեց կիրովաբադցիների պատասխանը. «Մենք,— գրում էին նրանք,— ընդունում ենք լենինականցիների մրցահրավերը։ Խոսք ենք տալիս կատարել և գերակատարել եռամսյակի պլանները»[33]։ Կոչին ջերմորեն արձագանքեցին նաև մյուս քաղաքների տեքստիլագործները։

Ամփոփելով հնգամյակի առաջին տարվա արդյունքները, ինչպես նաև բացահայտելով տեղ գտած թերությունները, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի սեպտեմբերյան (1929 թ.) պլենումը նոր խնդիրներ առաջադրեց։ Նա պահանջեց հնգամյակի երկրորդ տարվա արդյունաբերական պլանը կատարելու և առաջին տարվա ընթացքում երևան եկած ճեղքվածքները վերացնելու համար ծավալել երկրի բանվոր դասակարգի ուժերի լայն մոբիլիզացիա, անխնա բացահայտել տնտեսական օրգանների, ինչպես նաև կուսակցական, արհմիութենական ու կոմերիտական աշխատանքներում տեղ գտած թերությունները և արագորեն վերացնել դրանք։

Լենինականի տեքստիլ կոմբինատի արդֆինպլանների ճեղքվածքների վերացման և բանվորների ուժերի մոբիլիզացման գործում պլենումի որոշումները

---

30 Հ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխատ., էջ 126։

31 Պ. Տ. Ոսկերչյան, Սովետական Հայաստանի արդյունաբերությունը 1920—1944 թթ., Երևան, 1966, էջ 96։

32 Նույն տեղում։

33 «Բանվոր», 26.XII.1929։

կարևոր նշանակություն ունեցան։ Դրան մեծապես նպաստեց նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. դիրեկտիվ նամակը՝ ուղղված Լենինականի գավկոմին, տեքստիլ կոմբինատի կուսակցական կազմակերպության բոլոր անդամներին[34]։

1929 թ. դեկտեմբերին կոմբինատի կուսակցական, կոմերիտական կազմակերպությունների և կոլեկտիվների ժողովներում լայն քննարկման դրվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի նամակը։ Քննարկումները բացահայտեցին այն հիմնական պատճառները, որոնք արգելակում էին Հայաստանի արդյունաբերության գլխավոր ճյուղի՝ տեքստիլ արդյունաբերության առաջընթացը։ Մասնավորապես նշվեց, որ ձգձգվում է կապիտալ ներդրումների իրացումը, դանդաղ է ընթանում գործարանների նոր կորպուսների շինարարությունը, ուշանում է նոր սարքավորումների տեղակայումը, անբավարար են կազմակերպվում արտադրական պրոցեսները, չի բավականացնում էլեկտրաէներգիան, մեքենաների 30—35 տոկոսը չի աշխատում։ Զգալի թերություններ կային հումքի և օժանդակ նյութերի մատակարարման գործում. ցածր էր արտադրանքի որակը, բավարար ուշադրություն չէր դարձվում որակյալ բանվորական ուժի և ինժեներա-տեխնիկական անձնակազմի պատրաստմանը, ինչպես նաև աշխատանքի կազմակերպման գործին և այլն։

Կոմբինատում հրավիրված ժողովների ու կոնֆերանսների մասնակիցները «հնգամյակը չորս տարում» կենսագործելու խնդիրը համարեցին միանգամայն ռեալ և ստանձնեցին կոնկրետ պարտավորություններ։ Կոմբինատի կոմերիտական կոնֆերանսը, որոշելով հնգամյակը կատարել չորս տարում, միաժամանակ ամբողջ ձեռնարկությունը հայտարարեց «հարվածային գործարան», իսկ կոմերիտական կազմակերպությունը՝ «հարվածային բրիգադ»։ Կոլեկտիվի և կոմերիտականների այս նախաձեռնությունը հանդիպեց տնտեսական օրգանների որոշ ղեկավարների դիմադրությանը։ Նրանք գտնում էին, որ գործարաններն ի վիճակի չեն հարվածային աշխատանքի անցնելու, մանավանդ, որ այդ մասին չկար «ղեկավար ցուցում»։ Սակայն կուսակցական ակտիվի ժողովը պաշտպանեց ամբողջ կոլեկտիվի նախաձեռնությունն ու պահանջեց տնտեսական օրգաններից՝ ապահովել գործարանների հարվածային աշխատանքը։

Գործարանը ժամանակին հումքով մատակարարելու և նրա անընդմեջ աշխատանքն ապահովելու նպատակով կոմերիտական կազմակերպությունը մրցման հրավիրեց Ղուրղուլուի (Հոկտեմբերյան) շրջանի կոմերիտական կազմակերպությանը՝ կնքելով սոցիալիստական մրցության պայմանագիր Մեծ Շահրիար գյուղի «Կարմիր ուղի» և Փոքր Շահրիար գյուղի «Ինտերնացիոնալ» կոլտնտեսությունների կոմերիտական կազմակերպությունների հետ։ Հարվածային աշխատանքի անցնելու և կոմբինատի մատակարարման հարվածային մակարդակ ապահովելու մրցակոչով ԼԿԵՄ կազմակերպությունը մրցման հրավիրեց նաև Հայկոոպի, Հայառի, Անդրբամբակի, Հայբամբակի, Անդրպետառի, Ռեզինոտրեստի կոմերիտականներին։ Միաժամանակ կոմբինատի կոմերիտական կազմակերպությունը սոցմրցման հրավերով դիմեց ձեռնարկության ինժեներա-տեխնիկական աշխատողներին[35]։

---

34 «Հայկոմկուսի (բ) Կենտկոմի նամակը Լենինականի գավկոմին, տեքստիլ գործարանի կուսբջիջներին, տեքստիլ կազմակերպության բոլոր անդամներին», Երևան, 1929, էջ 31։

35 Մշի հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 48, ց. 2, գ. 50, թ. 55—57։

Կոմերիտական կազմակերպության և ինժեներա-տեխնիկական անձնակազմի միջև կնքվեց սոցիալիստական մրցության պայմանագիր։ Կուսակցական կազմակերպության ղեկավարությամբ և կոմերիտական կազմակերպության նախաձեռնությամբ 1930 թ. հունվարի 11—12-ին գործարանում անցկացվեց արտադրական կոնֆերանս, 14-ին՝ շքերթ և հանդիսավոր նիստ։ Հունվարի 15-ին մանարան ֆաբրիկայի կորպուսներից մեկը, որտեղ աշխատում էր 432 բանվոր և տեղադրված էր 128 հաստոց, կոմերիտական կազմակերպության նախաձեռնությամբ հայտարարվեց կոմերիտական[36]։ Արտադրամասերում առաջացած աշխատանքային վերելքի շնորհիվ արդեն հունվար ամսում ամբողջ տեքստիլ կոմբինատը պլանը գերակատարեց 5,6 տոկոսով, հաստոցների պարապուրդները 5131 ժամից իջեցվեց 2045-ի[37]։

Այսպիսով, 1924—1928 թթ. Հայաստանի թեթև արդյունաբերության խոշորագույն ձեռնարկություններից մեկը՝ Լենինականի տեքստիլ կոմբինատը, ոչ միայն հիմնադրվում ու սկզբնավորվում էր, այլև արտադրական լուրջ փորձություն ապրում, ձեռք բերում առաջին հաջողությունները։ Մնունդ առնելով տնտեսական ծանր ժամանակներում, գործարանն ու նրա մարդիկ, ստանալով բազմակողմանի օգնություն, տարեցտարի հասունանում, նորանոր հաջողությունների էին հասնում։ 1928 թ. վերածվելով կոմբինատի, ձեռնարկությունը հնգամյակի առաջին իսկ տարում իր արտադրանքի ծավալով արդեն դարձել էր հանրապետության խոշորագույն ձեռնարկություններից մեկը։

ИЗ ИСТОРИИ ЛЕНИНАКАНСКОГО ТЕКСТИЛЬНОГО КОМБИНАТА

А. А. АКОПЯН

Резюме

В статье на основе архивных материалов и данных периодики освещается история основания и первых шагов одного из крупных промышленных предприятий Советской Армении — Ленинаканского текстильного комбината. В связи с этим рассматривается целая группа вопросов, освещение которых дает обстоятельное представление как о зарождении предприятия, так и о ее людях — одном из передовых отрядов рабочего класса республики.

36 Նույն տեղում, գ. 530, թ. 28։

37 Հ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխատ., էջ 151։